ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 06» դեկտեմբերի 2018 թ. N 311-Ա

ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈԼԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի, 84-րդ հոդվածի 1-ին մասի, 95-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման N3 հավելվածի 69-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները

կարգադրում եմ՝

1. 2018 թվականի դեկտեմբերի 6-ից, մինչև սահմանված կարգով դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի անցկացումը և տնօրենի ընտրվելը «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի Ա.Վարդանյանի անվան N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Սամվել Անդրանիկի Մելիքյանին՝ կնքելով ժամանակավոր աշխատանքային պայմանագիր:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
ք.Գավառ